ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 153

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 144 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արմինե Վաչիկի Սարգսյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգեզանգված 4-րդ թաղամաս թիվ 16 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 09102020-07-0028, ծածկագիր 07-054-0113-0002) 2003-2021 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված 2 պատուհանները: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Արմինե Վաչիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգեզանգված 4-րդ թաղամաս թիվ 16 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2003-2021 թվականներին ինքնակամ կառուցվել է 209.87 քմ մակերեսով այգետնակ, 7.97 քմ մակերեսով սան. հանգույց, 18.26 քմ մակերեսով պարիսպ և ինքնակամ բացվել է 2 պատուհան:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1; 9; 10; 11; 13; 18 կետերի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգեզանգված 4-րդ թաղամաս թիվ 16 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացի Արմինե Վաչիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 2003-2021 թվականներին կառուցված 209.87 քմ մակերեսով այգետնակը, 7.97 քմ մակերեսով սան. հանգույցը, 18.26 քմ մակերեսով պարիսպը և ինքնակամ բացված 2 պատուհանը համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացի Արմինե Վաչիկի Սարգսյանին ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ բացված 2 պատուհանների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 449000 (չորս հարյուր քառասուն ինն հազար) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 01-ի «ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 144 որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 10
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 154

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ *որոշում եմ.*

1. Թույլատրել Գոռ Մարզպետի Մկրտչյանին իրեն սեփականության իրավունքով պատկանող 07-054-0332-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի (սեփականության վկայական 15072021-07-0061) վրա մեկ տարվա ընթացքում կատարել հողային բարեկարգման և բարեվման, մասնավորապես հողահարթեցման և քարհավաքման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 13
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 155

ԱԲԳԱՐ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 03-Ի N 126 ԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 149 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջների՝ *որոշում եմ.*

1. Աբգար Յուրիկի Բուդաղյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Կոտայքի մարզ համայնք Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 19 հասցեի (սեփականության վկայական N 23102020-07-0084, ծածկագիր 07-054-0217-0081) և Կոտայքի մարզ համայնք Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 19/1 հասցեի (սեփականության վկայական N 28072021-07-0152, ծածկագիր 07-054-0217-0062) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերը միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 19:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 03-ի «ԱԲԳԱՐ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 126 և սեպտեմբերի 06-ի «ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 03-Ի N 126 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 149 որոշումները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 14
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 156

ԱՐՏՅՈՄ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 01-ի N 38 որոշումը և քաղաքացու դիմումը՝ *որոշում եմ.*

1. Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Արտյոմ Կառլենի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0302-0039 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 11062021-07-0127) 0.067 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու համար:
2. Արտյոմ Կառլենի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող Պտղնի համայնքում գտնվող 07-054-0302-0039 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
3. Արտյոմ Կառլենի Ղարիբյանին պատկանող 07-054-0302-0039 ծածկագրով 0.067 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 15-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 11/3:
4. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Պտղնի համայնքի ղեկավարի տեղակալ Երջանիկ Միսակյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 14
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 157

ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 01-ի N 38 որոշումը և քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Արսեն Կաղենի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0302-0038 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 11062021-07-0124) 0.07866 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու համար:
2. Արսեն Կաղենի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող Պտղնի համայնքում գտնվող 07-054-0302-0038 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
3. Արսեն Կաղենի Ղարիբյանին պատկանող 07-054-0302-0038 ծածկագրով 0.07866 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 15-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 11/4:
4. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվենշումում:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Պտղնի համայնքի ղեկավարի տեղակալ Երջանիկ Միսակյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. սեպտեմբեր 14
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 158

ԳԱՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՑԱՆԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման N 4 հավելվածի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Գարիկ Գևորգի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 16 հասցեի (սեփականության վկայական N 13082021-07-0039, ծածկագիր 07-054-0203-0059) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում առանց շինարարության թույլտվության մեկ տարվա ընթացքում կատարել ցանկապատման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 14
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 159

ՄԱՐՏԻՐՈՍ ՍՐԱԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարտիրոս Անդրեասի Սրաբյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 7-րդ տեղամաս թիվ 6 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 28062019-07-0045, ծածկագիր 07-054-0114-0029) 2019-2020 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Մարտիրոս Անդրեասի Սրաբյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 7-րդ տեղամաս թիվ 6 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2019-2020 թվականներին ինքնակամ կառուցվել է 199.5 քմ մակերեսով այգետնակ և 3.5 քմ մակերեսով աստիճանավանդակ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 7-րդ տեղամաս թիվ 6 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացի Մարտիրոս Անդրեասի Սրաբյանին սեփականության իրավունքով պատկանող 2019-2020 թվականներին կառուցված 199.5 քմ մակերեսով այգետնակը և 3.5 քմ մակերեսով աստիճանավանդակը համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացի Մարտիրոս Անդրեասի Սրաբյանին ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 25
գ.Պտղնի